ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«10» մայիսի 2023թ. N ՄՈ/171-Ա

ք. Արմավիր

ՆԱԻՐԱ ԽՈՐԵՆՅԱՆԻՆ «ԱՐՄԱՎԻՐԻ ՄՈՎՍԵՍ ՍԻԼԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ N6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 69-րդ կետով, հիմք ընդունելով «Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2023 թվականի մայիսի 8-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Նաիրա Խորենյանին՝ մինչև հիմքի վերացումը:
2. Նաիրա Խորենյանի աշխատանավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**